ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«29» 05 2025 թ.
N 277

Հասցե ՀՀ, ք Վանաձոր, Նժդեհի 2/42
Հեռ. (+374322) 2-02-86
էլ. փոստ vanmedicalcenter@mail.ru, կայք www.vanmc.am

«ԿՎԱՆՏԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

/Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին/

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ԿՎԱՆՏԱ» ՍՊ ընկերության միջև կնքված «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար 2024թ դեկտեմբերի 24-ին կնքված N ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրի /այսուհետ՝ Պայմանագիր/ համաձայն՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից տրվել է պատվեր 12 չափաբաժնի համար՝ Ներարկիչ 53մլ ,եռակոմպոնենտ , 0,7-40 մմ 22G x1 ½ ,սակայն «Կվանտա ՍՊ ընկերության կողմից ապրանքը չի մատակարարվել: «Կվանտա» ՍՊ ընկերությանը 15.04.2025թ. N 193 գրությամբ առաջարկվել է վերը նշված ապրանքները 3 /երեք/ օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պատվիրված և դեռևս չմատակարարված ապրանքի ողջ քանակը:

Ի պատասխան գրությամբ <<Կվանտա>>ՍՊ ընկերությունը առաջարկել է լուծել պայմանագիրը 12 չափաբաժնի մասով:

Հաշվի առնելով, որ «Կվանտա» ՍՊ ընկերությունը էականորեն խախտել է պայմանագիրը՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 /հինգ/ օրից ավելի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը 12 չափաբաժնի մասով:

Տեղեկացնում ենք նաև, որ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 1150004484110100 հաշվեհամարին ենթակա է գանձման 60552 (Վաթսուն հազար հինգ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 90828 (իննսուն հազար ութ հարյուր քսանութ) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

Սույն ծանուցումը 29.05.2025 թվականին էլեկտրոնային gnumer.am կայքով:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի պարտականությունները կատարող՝ *Մ. Հազրոյան*